

Վարակումը կամ սեպսիսը (արյան վարակումը) հայտնաբերելու իմ ծրագիրը

Անունը՝ _____ Ամսաթիվը՝ _____

Կանաչ գոտի՝ վարակման նշանների բացակայություն

- ✓ Իմ սրտի զարկերը և շնչառությունն ինձ համար բնականոն են:
- ✓ Ես չեմ դողում կամ մրսում:
- ✓ Իմ էներգիայի մակարդակը բնականոն է:
- ✓ Իմ մտածողությունը հստակ է:
- ✓ Վերքերը և ներերակային ներարկման տեղերը հաջողությամբ ապաքինվում են:



Կանաչը նշանակում է, որ ես պետք է՝

- ✓ ամեն օր ստուգեմ, թե արդյոք վարակման նշաններ չկան
- ✓ բժշկի ցուցումների համաձայն շարունակեմ ընդունել իմ դեղերը, հատկապես եթե ես ապաքինվում եմ որևէ վարակումից կամ հիվանդությունից
- ✓ ներկայանամ ժամադրություններին իմ բժշկի և այլ անձանց մոտ
- ✓ կատարեմ ինձ տրված ցուցումները, եթե որևէ վերք կամ ներերակային ներարկման տեղ եմ խնամում
- ✓ լվանամ ձեռքերս և խուսափեմ հիվանդ անձանց հետ շփվելուց

Դեղին գոտի՝ Զգուշացում

- ✓ Սրտի զարկերը սովորականից ավելի արագ են թվում:
- ✓ Շնչառությունս արագացած է, և ես հագում եմ:
- ✓ Ես ջերմություն ունեմ՝ 100.0°F-ից մինչև 101.4°F (37.7°C-ից մինչև 38.5°C):
- ✓ Ես մրսում եմ և դողում. չեմ կարողանում ջերմանալ:
- ✓ Մտածողությունս դանդաղ է. գլխումս խառնաշփոթ է:
- ✓ Ես ինձ լավ չեմ զգում. այնքան հոգնած եմ, որ չեմ կարողանում որևէ գործ անել:
- ✓ Ես 5 ժամ չեմ միզել կամ միզելիս ցավ կամ այրոց եմ զգում:
- ✓ Վերքերը և ներերակային ներարկման տեղերը փոփոխված տեսք ունեն:




Դեղինը նշանակում է, որ ես պետք է՝

- ✓ կապ հաստատեմ իմ բժշկի հետ, հատկապես՝ եթե վերջերս հիվանդ եմ եղել կամ վիրահատության եմ ենթարկվել Թթվածնի դիմակ դրեք, եթե Ձեզ նշանակված է:
- ✓ հարցնեմ, թե արդյոք հնարավոր է, որ ես վարակում կամ սեպսիս ունենամ
- ✓ բժիշկ՝ _____
հեռախոսի համարը՝ _____

Կարմիր՝ բուժօգնություն

- ✓ Ես ինձ վատ եմ զգում, շատ հոգնած եմ, թույլ ու մարմինս ջարդվում է:
- ✓ Սրտի զարկերը և շնչառությունս շատ արագ են:
- ✓ Ջերմությունս 101.5°F (38.6°C) կամ ավելի բարձր է:
- ✓ Ջերմությունս 96.8°F (36°C) կամ ավելի ցածր է:
- ✓ Եղունգներս գունատ կամ կապտավուն են:
- ✓ Մարդիկ ասում են, որ անիմաստ բաներ եմ խոսում:
- ✓ Իմ վերքը կամ ներերակային ներարկման տեղը ցավում է, կարմրել է, տհաճ հոտ է արձակում կամ թարախակալել է:



Կարմիրը նշանակում է, որ ես պետք է՝

- ✓ արագ գործեմ ... սեպսիսը լուրջ վտանգ է:
- ✓ **Զանգահարեք 9-1-1** և ասացեք. «Ինձ հարկավոր է անհապաղ ստուգվել: Ես կասկածում եմ, որ սեպսիս ունեմ»: